

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի չորրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2019 թվականի չորրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3102 թղթակցություն, առաքվել՝ 2320 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ Ազգային ժողովից՝ 3, ՀՀ պետական վերահսկողության ծառայությունից՝ 2, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 2, ՀՀ վարչապետից՝ 106, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 299, Հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 368, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 849, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 891, գաղտնի թղթակցություն՝ 22, քաղաքացիներից՝ 558 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 77 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 2, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 44, պետական վերահսկողական ծառայությունից՝ 1, մարդու իրավունքների պաշտպանից՝ 1, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 18, հանրապետական գործադիր մարմիններից՝ 11 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2019թ. չորրորդ եռամսյակում կատարվել է 54 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: